ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՍԻՄԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Սիմա Իսկանդարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապա-տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2023 թվականի մայիսի 23-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Սիմա Իսկանդարյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(…)

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին իրավակիրառ պրակտիկայում՝ դատարանների կողմից տրված մեկնաբա-նությունն առ այն, որ ***«հայցը ենթակա չէ դատարանում քննության, քանի որ***

ա*/ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու կամ հարու-ցելը մերժելու կամ հարուցված վարույթը կարճելու մասին վարույթ հարուցող մարմնի որոշումը չի կարող որևէ դատարանում քննության առարկա դառնալ այն պատճա-ռաբանությամբ, որ որևէ դատարան չունի դատավորի կարգապահական պատաս-խանատվության ենթարկելու հիմքերի առկայության կամ բացակայության ստուգման իրավասություն, և վարույթ հարուցող մարմնի կողմից վարույթ հարուցելու, այն*

կասեցնելու, վերսկսելու և կարճելու կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդ միջնորդություն ներկայացնելու մասին որոշումները դատական վերահսկողության առարկա դարձնելը կհակասի Հայաստանի Հանրապետությունում դատարանների սահմանադրական գործառույթներին և Բարձրագույն դատական խորհրդի կարգավիճակին:

բ/ *«Բարձրագույն դատական խորհրդի՝ սահմանադրական կարգավիճակով պայմանավորված «միանձնյա» դերակատարությունը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում բացառում է ՀՀ-ում գործող դատարաններից որևէ մեկում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման իրավական հնարավորությունը, ուստի և դատական վերահսկողության տիրույթից դուրս է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու փուլին առնչվող հարցը (վեճը)» ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:*

2. Ներկայացնելով թիվ ՎԴ/0897/05/22 վարչական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ անձի դատարան դիմելու իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, և Դատարանը պետք է հաշվի առնի, որ տվյալ պարագայում քննարկվում են անձի դատական պաշտպանության, ինչպես նաև խախտված սուբյեկտիվ իրավունքները վերականգնելու հարցերը, որոնք առաջնահերթ են:

Դիմողն ընդգծում է, որ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) 2002 թվականի թիվ 3 Կարծիքն ուղղակիորեն անդրադառնում է կարգապահական վարույթ հարուցող մարմնի գործողությունների կամ որոշումների դատական բողոքարկման կարևորությանը: Դիմողի պնդմամբ՝ վերոնշյալ Կարծիքի 77-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ կարգապահական վարույթի վերաբերյալ

կարգավորումներն այնպիսին պետք է լինեն, որ թույլ տան նախնական կարգապահական վարույթ հարուցող մարմնի (լինի դա ինքնին իրավասու մարմին, տրիբունալ կամ դատարան) որոշման բողոքարկումը դատարան:

Դիմողի գնահատմամբ՝ անվիճելի է, որ ինքը, հանդիսանալով իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի շահագրգիռ սուբյեկտ, ուներ վերոնշյալ իրավունքը, սակայն այլ հարց է, թե ինչպես դա պետք է իրականացվեր: Դիմողի պնդմամբ՝ հատկանշական է, որ ինքը գործադրել է դատական պաշտպանության բոլոր հնարավոր միջոցները:

Դիմողն ընդգծում է, որ ինքն իր վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցվելու պահից ի վեր դիմել կամ մասնակից է եղել դատավարության, սակայն, սպառելով իր իրավունքների դատական պաշտպանության հնարավոր միջոցները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հետևանքով զրկվել է ՀՀ արդարադատության նախարարի կողմից իր նկատմամբ կրկնակի գործի հարուցում իրականացնելու հարցը դատական քննության առարկա դարձնելու իրական հնարավորությունից:

Ամփոփելով՝ Դիմողը եզրահանգում է, որ ուղղակիորեն խախտվել են իր՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, ինչպես նաև անուղղակիորեն խախտվել է իր՝ Սահմանադրության 2-րդ գլխով ամրագրված, մասնավորապես՝ 49-րդ հոդվածով սահմանված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքը: Ըստ Դիմողի՝ նման պայմաններում անհրաժեշտ է սահմանադրահիրավական գնահատական տալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությանը:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը

գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում****:*

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի*

նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և ***հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է****:*

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ *«(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում,* ***երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:*** *(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ,* ***դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:***

Սահմանադրական դատարանը վերոնշյալ ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ *«(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե* ***իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:***

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև փաստել է, որ *«(. . .) անհատական դիմումների ընդունելիության վավերապայմանների սահմանումն ինքնանպատակ չէ:* ***Այդ վավերապայմանների նպատակն է ապահովել սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացումը՝*** *դատարանին ձերբազատելով ինչպես անհիմն դիմումներից և դրանց հետևանքով սահմանադրական դատարանն անհիմն ծանրաբեռնելուց, այնպես էլ այն դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին, այն է՝*

ընդհանուր արդարադատության իրականացումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա ապահովելուն»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն* ***ակնհայտ անհիմն է:***

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի և տվյալ հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:**

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները և Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

Այսպես՝ սույն անհատական դիմումի շրջանակում Դիմողի կողմից ներկայացված վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության **հակասահմանադրականության հիմնավորմանն ուղղված միակ փաստարկը** վերջինիս՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների խախտման, ինչպես նաև անուղղակիորեն՝ Սահմանադրության 49-րդ հոդվածով երաշխավորված՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի խախտման վերաբերյալ **պնդումն է:**

Մասնավորապես՝ Դիմողն այս առումով **սահմանափակվել է իր համապատասխան հիմնական իրավունքների խախտման վերաբերյալ լոկ պնդման վկայակոչմամբ՝ բավարար կերպով իրավաբանորեն չհիմնավորելով տվյալ հիմնական իրավունքների խախտման փաստը, հետևաբար՝ այդ փաստի և իր կողմից վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:**

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ Դիմողը գտնում է, որ առկա է իրավակիրառ պրակտիկայում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին տրված մեկնաբանությանը սահմանադրաիրավական գնահատական տալու անհրաժեշտություն, **սակայն վերջինիս ներկայացրած փաստարկներն իրենց համակցության մեջ չեն հաղթահարում Սահմանադրական դատարան հիմնավոր բողոք ներկայացնելու անհրաժեշտ նվազագույն շեմը: Մասնավորապես՝ Դիմողը բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր կողմից վիճարկվող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված իր որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման հանգեցնելը, ինչպես նաև դրանց միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը:**

Քննարկվող համատեքստում հարկ է հստակ արձանագրել, որ անհատական դիմումի շրջանակներում նորմատիվ իրավական ակտի դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված համապատասխան մեկնաբանությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված առնվազն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, որը սույն պարագայում տեղի չի ունեցել:**

Այլ կերպ ասած՝ դիմումի ուսումնասիրությունից **հնարավոր չէ հանգել ողջամիտ հետևության այն մասին, թե վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում**

տրված մեկնաբանությունն ի՞նչ եղանակով է հանգեցրել Դիմողի՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման:

Փոխարենը՝ Դիմողը սահմանափակվել է իր՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված հիմնական իրավունքների խախտման վերաբերյալ պնդման պարզապես վկայակոչմամբ՝ բավարար կերպով իրավաբանորեն չհիմնավորելով իր կողմից վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և նման խախտման ընդհանրությունը, դրանց միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը՝ սույն կոնկրետ գործի հանգամանքների և առանձնահատկությունների հաշվառմամբ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ **սույն դիմումով չի հիմնավորվում** Դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության **հակասությունը Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքներին: Դիմողը բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել ինչպես իր կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի ենթադրյալ խախտման փաստը, այնպես էլ դրա և վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:**

Այսպիսով, **սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, ինչը գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից մերժելու հիմք է:**

Ուստի՝ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Սիմա Իսկանդարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

13 հունիսի 2023 թվականի
ՍԴԱՈ-65